



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. (+374281) 2 25 22

« 13 » « 03 » 2024թ.

N 01/14-5/1812-2024

<<ԺՈՂՈՎՈՒՐԴ>> ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ

ԼՐԱԳՐՈՂ Ն.ԱՂԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Աղասյան

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում եմ, որ սահմանամերձ գյուղական բնակավայրերում բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրում /ՀՀ Կառավարության 09.06.2022թ. 842-Լ որոշում/ ընդգրկված են Վայոց ձորի մարզի 6 բնակավայր՝ Արենի համայնքի Արենի և Խաչիկ բնակավայրերը, Վայք համայնքի Բարձրունի, Նոր Ազնաբերդ, Սերս և Խնձորուտ բնակավայրերը:

Շահառուների շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կայքէջով և ՖԲէջով ներկայացվել են ծրագրի մանրամասները:

Անհրաժեշտ է բավարարել երկու պայման՝ ունենալ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնություն, և ամուսիններից առնվազն մեկն ունենա ՀՀ քաղաքացիություն: Վերջիններս կարող են ծրագրից օգտվել, եթե ունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող հող կամ կիսակառույց շինություն սահմանամերձ գյուղական բնակավայրում, շինարարական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն, նախագիծ/նախահաշիվ:

Նրանք հնարավորություն ունեն վերոնշյալ պայմանները բավարարելու պարագայում հիփոթեքային վարկավորմամբ կառուցել իրենց տունը սահմանամերձ գյուղական բնակավայրում պետության աջակցությամբ 16 մլն դրամի շրջանակում, այսինքն պետությունն ամբողջությամբ կմարի շահառուի հիփոթեքային վարկը, եթե

տան նախահաշիվը չգերազանցի 16 միլիոն դրամը, և այն կառուցվի Կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ բնակավայրերում:

13.03.2024թ. դրությամբ Վայոց ձորի մարզում տվյալների այսպիսի պատկեր է առկա.

| Հ/Հ | Համայնք | Բնակավայր | Ծրագրից օգտվելու համար դիմող քաղաքացիների թիվը | Շին. թույլտվություն ստացած քաղաքացիների թիվը | Հաստատված վարկերի թիվը | Մեկնարկած շինարարական աշխատանքների թիվը |
|------------------------------------|---------|--------------|--|--|------------------------|---|
| 1 | Վայք | Բարձրունի | 8 | 0 | 0 | 0 |
| 2 | | Սերս | 2 | 1 | 1 | 0 |
| 3 | | Նոր Ազնաբերդ | 3 | 0 | 0 | 0 |
| 4 | | Խնձորուտ | 5 | 1 | 1 | 0 |
| 5 | Արենի | Արենի | 69 | 69 | 41 | 27 |
| 6 | | Խաչիկ | 10 | 10 | 6 | 1 |
| Ընդամենը Վայոց ձորի մարզում | | | 97 | 81 | 49 | 28 |

Ակնկալվում է, որ մինչև ծրագրի ավարտը՝ 2025 թ. դեկտեմբերի 30-ը, շահառուների թիվը կավելանա: Դրան կնպաստի նաև Խաչիկ բնակավայրի 77 քաղաքացու վարկային պարտավորությունը մարելու մասին ՀՀ կառավարության 29.02.2024թ. որոշումը:



2024-03-13 17:23:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ